ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.01 - <<Քաղաքական գիտության տեսություն>> մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, **Խոսրովադուխտ Գարեգինի Ազատյանի «Պառլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Խոսրովադուխտ Ազատյանի ատենախոսության թեման **արդիական է**, քանի որ ներկայումս պառլամենտարիզմը ժողովրդավարական պետությունների համար կարևոր երևույթ է: Յուրաքանչյուր երկրում այն գտնում է արտահայտման իր սեփական ձևը և բնորոշվում է տվյալ պետությանը հատուկ առանձնահատկություններով: Չնայած պատմական տարբեր ժամանակահատվածներում հանդիպած դժվարություններին և սրընթաց փոփոխվող միջազգային կյանքին՝ պառլամենտարիզմը հարթել է իր տեղը և շարունակում է մնալ քաղաքական կյանքի և ժողովրդավարության զարգացման հիմքերից մեկը: Բացի դրանից՝ Հայաստանում, սահմանադրական բարեփոխումներին հաջորդած քաղաքական գործընթացները խիստ անհրաժեշտ են դարձնում պառլամենտարիզմի իրավաքաղաքական վերլուծությունը փոխակերպվող հասարակություններում, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում: Նման վերլուծությունը կարևոր ու արդիական է նաև պետության քաղաքական զարգացման ուղենիշները վերհանելու և հեռանկարները ուրվագծելու տեսանկյունից: Խորհրդարանական կառավարման համակարգին անցման գործընթացը ներկայումս թևակոխել է զարգացման նոր փուլ՝ համընկնելով ներքաղաքական տեղաշարժերի հետ, ինչն անհրաժեշտ է դարձնում պառլամենտարիզմի թեմայի շուրջ գիտական ուսումնասիրությունների իրականացումը: Այս առումով, արդիական են հիմնախնդրի ուսումնասիրության ինչպես գիտական, այնպես էլ մեթոդաբանական ասպեկտները: Ատենախոսության **նպատակները** գիտական են: Ատենախոսը հասարակական-քաղաքական մտքի և հայեցակարգերի շրջանակներում գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրել է պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերը: Ժամանակակից պառլամենտարիզմը հասարակական-քաղաքական երկարատև զարգացման արդյունք է: Այս բազմաշերտ ֆենոմենի ակունքներում ընկած տեսահայեցակարգային հիմքերի վերհանումը հեղինակն իրականացրել է դրա կայացման հաջորդականությունն ու ժամանակագրությունը ներկայացնելու ճանապարհով: Համեմատական մեթոդի կիրառմամբ Խ. Ազատյանը դիտարկել է

Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային տարբեր երկրներում փոխակերպման գործընթացների բնույթը քաղաքական անցման համատեքստում:

Ես գնահատում եմ հեղինակի կողմից ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող պատճառների վերհանումը, որն էլ հնարավորություն է տվել բացահայտել դրա զարգացման հրամայականները:

Հեղինակն իր աշխատությունն առավել համապատասխանեցրել է մասնագիտական շիֆրին և հետազոտությունն արվել է քաղաքական գիտության տեսության կտրվածքով: Ներկայացվել է ժողովրդավարության զարգացման վրա պառլամենտարիզմի ունեցած նշանակությունը: Դրական է այն, որ տեսական հետազոտության արդյունքները առարկայացած են քաղաքական գործընթացների վերլուծությամբ:

Գաղտնիք չէ, որ ցանկացած ատենախոսության արժևորման առաջնային չափանիշը գիտական նորույթի առկայությունն է: Հետազոտության գիտական նորույթը հստակորեն ձևակերպված է առանձին դրույթներով: Ատենախոսության մեջ գիտական նորույթ պարունակող առավել հիշարժան արդյունքներ ենք համարում ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանը նպաստող որոշակի մեխանիզմների առաջարկումը, որոնցից են ընտրական օրենսգրքի կատարելագործման, պատգամավոր-ընտրող երկկողմ հաղորդակցության ամրապնդման, հանրային ընկալումներում խորհրդարանի ինստիտուտի իմիջի բարձրացման անհրաժեշտությունների մատնանշումը և այլն: Ատենախոսին հաջողվել է կոնկրետացնել իր ուսումնասիրության նպատակային լուծումները: Այսպես օրինակ, հիմնավորվել է, որ պառլամենտարիզմի կայացման համար կառավարման համակարգի ընտրությունը կարևոր, սակայն ոչ բավարար պայման է: ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացումը դիտարկվել է փոխակերպման գործընթացների պրիզմայի ներքո: Հիմնավորվել է, որ հենց փոխակերպման առանձնահատկություններով էլ պայմանավորվել է պառլամենտարիզմի զարգացումը Հայաստանի Երրորդ Հանրապետությունում:

Արժևորում եմ Խոսրովադուխտ Ազատյանի ատենախոսությունը որպես քաղաքական գիտության տեսության մասնագիտությամբ հետազոտություն, որովհետև հեղինակը ուսումնասիրել է այս ոլորտի կարևոր տեսական հիմնախնդիրներ: Գիտական մակարդակով ներկայացվել է պառլամենտարիզմի հիմնախնդիրը արդի քաղաքագիտության դիսկուրսում, որը հնարավորություն է տվել հասկանալու, թե որքանով է հեղինակն իր լուման ներդրել այս ոլորտում:

Արդի քաղաքական գիտությունների համար օրակարգային հարց է ժողովրդավարության կայացման նախադրյալների բացահայտումը: Այս առումով հեղինակը ևս որոշակի ներդրում ունի, որովհետև կարողացել է հիմնավորել, որ առանց իրական գործառնող խորհրդարանի անհնար է կառուցել ժողովրդավարական իրավական պետություն, ստեղծել օրենսդրության և իրավունքի արդյունավետ համակարգ, հասնել քաղաքական կուսակցությունների զարգացմանը:

Կարևոր է, որ հեղինակը նախանշել է ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացման միտումները: Հիմնավորվել է, որ ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացման համար անհրաժեշտություն է կուսակցական համակարգի կայացումը՝ վերջինիս արդիականացումը պայմանավորելով հասարակության լայն փոխակերպման գործոններով, կառավարման համակարգի և քաղաքական վարչակարգի բարելավմանն ուղղված փոփոխություններով:

Արժևորում ենք, որ ՀՀ-ում պառլամենտարիզմի զարգացմանն ուղղված գործնական առաջարկների ներկայացումը հեղինակն իրականացրել է փոխակերպման գործընթացում գտնվող տարբեր խումբ երկրների փորձի ուսումնասիրման և համեմատության արդյունքում:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են թեմայի ուսումնասիրության հետ կապված տեսական հիմքերն ու հիմնական աղբյուրները: Օգտագործվել են գիտական մենագրություններ, հոդվածներ: Հետազոտության ուսումնասիրության իրավանորմատիվային հիմքը կազմել են ՀՀ օրենքները և իրավական ակտերը, պաշտոնական տվյալները, ինչպես նաև համացանցային մի շարք աղբյուրներ: Օգտագործվել են գիտական վերլուծական հաստատությունների և ուղեղային կենտրոնների ներկայացուցիչների հետազոտական նյութերը:

Ատենախոսության մեջ առկա են նաև որոշակի թերություններ, կան բացթողումներ որոնցից ցանկանում ենք նշել հետևյալները.

1. Ատենախոսության առաջին գլխի երկրորդ՝ ««Պառլամենտարիզմ» հասկացության մեկնաբանությունները» ենթագլուխը, մեր կարծիքով, անհաջող է ձևակերպված: Լավ կլիներ, որ ընդհանրական բնորոշման փոխարեն վերնագրում արտացոլվեր հեղինակի կատարած քննական վերլուծությունը:

2. Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ՝ «Պառլամենտարիզմի առանձնահատկությունները հետխորհրդային երկրների փոխակերպման պայմաններում» ենթագլխի հետազոտության առարկան մեծ է և ընդգրկուն, ինչը հանգեցրել է որոշակի մակերեսայնության:

3. Ապացուցված իրողություն է այն, թե պառլամենտարիզմի համար որքան կարևոր է կայացած կուսակցական համակարգի առկայությունը: Մեր

կարծիքով ատենախոսությունը մեծապես կշահեր, եթե երրորդ՝ «Կուսակցական համակարգի կայացումը որպես պառլամենտարիզմի զարգացման նախադրյալ ՀՀ-ում» գլխում հեղինակն ավելի մեծ շեշտադրում կատարեր այն հարցին, թե կուսակցական համակարգի որ ենթատիպն առավել կնպաստի պառլամենտարիզմի զարգացմանը ՀՀ-ում:

4. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի որոշ բացթողումներ և թերություններ:

Մեր դիտարկմամբ, վերը նշված դիտողությունները էականորեն չեն գցում ատենախոսության գիտական արժեքը: Ատենախոսության եզրահանգումները գիտական են և բավականին արժեքավոր Հայաստանի քաղաքական գիտությունների համար: Ատենախոսական աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներով հեղինակը հանգել է այն եզրակացության, որ պետք է առավելագույնս զարգացնել խորհրդարանի ինստիտուտը: Այս առումով հիմնավորված է Հայաստանը ժողովրդավարական զարգացած երկրների քաղաքական ու իրավական համակարգերին ու եվրոպական չափանիշներին մոտեցնելու անհրաժեշտությունը: Այս հանգամանքը կարող է նպաստել ժողովրդավար երկրների հետ գործակցային հարաբերությունների զարգացմանը: Այս և մյուս եզրահանգումները կարող են օգտակար լինել ՀՀ ներքին քաղաքական հայեցակարգի առանձին դրույթների մշակման և նաև պետության քաղաքական դիրքորոշումների պարզեցման համար:

Ատենախոսության բոլոր հատվածներում առկա են թարմ և արժանահավատ գնահատականներ և համեմատություններ: Ատենախոսության շարադրման լեզուն և ոճը լիովին համապատասխանում են պահանջվող մակարդակին: Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտական հիմնահարցերի շարադրման հետևողականությամբ, հմտությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ: Համապատասխան եզրահանգումներն ու սկզբունքային հիմնադրույթները հայեցակարգային բնույթի են:

Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից՝ գտնում եմ,

որ **ԻԳ.00.01 - <<Քաղաքական գիտության տեսություն>>** մասնագիտությամբ, քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Խոսրովադուխտ Գարեգինի Ազատյանի «Պառլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ատենախոսություններին առաջադրվող պահանջներին:

ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր, ք.գ.դ. / Գ. Քեռյան/

Քաղաքական գիտ. դոկտոր Գ. Մ. Քեռյանի ստորագրությունը հաստատում եմ
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Մ. Վ. Հովհաննիսյան

(կազմակերպության գիտ. քարտուղար)

29. 08. 2022 թ.

(ստորագրություն և կնիք)